

ՔՐ. ԿԱՐԱ-ՄՈՒՐՁԱՅԻ «ԶԱՆ ԳՅՈՒՆՈՒՄ» ՖԵՆՐԻԱՆ

1899—1901 թթ. ժամանակամիջոցում Քր. Կարա-Մուրզայի կազմակերպած համերգներում ցուցադրվել են «Հարսի վերջին հրաժեշտը հօր տանից» երաժշտական պատկերը, ինչպես նաև «Զրօխնէթի գիշերը», «Էջմիածնայ տօն» ֆեներիաները: Ինչպես կարելի է կոահել անվանումներից, նշված երաժշտական պատկերը և ֆեներիաները հայկական ծեսերի բնական մշակումն են: Երևանի գրականության և արվեստի թանգարանի Քր. Կարա-Մուրզայի ֆոնդում կան մի շարք համերգային ծրագրեր (ԳԱԹ, Քր. Կարա-Մուրզայի ֆոնդ, թիվ 195), որտեղ թվարկված են բնագործությունների ընթացքում կատարվող երաժշտական համարները՝ խմբերգային, մենակատար երգչի կամ մենակատարի և երգչախմբի համար: Սակայն չի պահպանվել ոչ մի փաստաթուղթ, որում քիչ թե շատ նկարագրված լինի նրանց բնագործական պատկերը:

Նույն ֆոնդում պահպանվում է տետր (թիվ 495), որտեղ Կարա-Մուրզան շարադրել է «Զան Գյուլում» համբարձման վիճակախաղ հայ ժողովրդի իրական կյանքից» ֆեներիայի նախագիծը: Այստեղ նշված են գործող անձերը և դերակատարները, բերված է բնագործության համար պահանջվող իրերի և զգեստների ցուցակը, թվարկված են ֆեներիայի ընթացքում կատարվող երգերը, պարերը, նվաղախմբային համարները, որոշ նշումներ են արված բնական գործողության վերաբերյալ և այլն: Քր. Կարա-Մուրզայի ֆոնդում մեր ուշադրությունը գրավեց նաև մի տետր, որը կատարվում գրանցված է որպես «Անհայտ սցենար» (թիվ 92): Համեմատական վերլուծությունը ցույց տվեց, որ այս տետրում շարադրված է նույն «Զան Գյուլում» ֆեներիայի սցենարը: Սույն հրապարակմամբ՝ լայնածավալ ժանոթագրություններով, փորձ է արվում վերականգնել ֆեներիայի գործողության ենթադրվող բնականացման մոտավոր պատկերը, ինչպես նաև բացահայտել նրա երաժշտական և պարային ձևավորման առանձնահատկությունները:

«Զան Գյուլում» ֆեներիան, ըստ երևույթին, երբեք չի ցուցադրվել, քանի որ Կարա-Մուրզայի համերգների ծրագրերից ոչ մեկում չի հիշատակվում: Սակայն հրապարակվող փաստաթղթի վերլուծությունը թույլ է տալիս որոշ պատկերացում ստանալ նաև վերը նշված «Հարսի վերջին հրաժեշտը հօր տանից», «Զրօխնէթի գիշերը», «Էջմիածնայ տօն» ծեսերի բնական մարմնավորման մասին:

Ն. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԳԱԹ Քր. Կարա-Մուրզայի ֆոնդ, թիվ 495

«ԶԱՆ ԳՅՈՒՆՈՒՄ» (ֆեներիա)¹

էջ 1

«ԶԱՆ ԳՅՈՒՆՈՒՄ»

Ֆեներիա 1 գործողությունամբ

Նախագիծ = (Комплекты)

ՑՈՒՅԱԿ

1. Անձինք

60 հոգի + 20 հոգի

40 + 2 խումբ + 3 հոգի*

խմբեր

2. Իրեր

12 տեսակ 189 կտոր

* Սեկ բառ անընթեանելի է:

3. Շորեր

4 + 2 = 6 տեսակ

60 ձևեր

4. Պարեր

17 անգամ

6 տեսակ

5. Երգեր

28 տուն 4 անգամ

6. Երաժշտություն

14 անգամ

9 տեսակ պիես

7. Շարժում

11 անգամ

8. Տևում է

60 րոպե

9. Նոտաներ գրվում է օրկեստրի

3 պիես

էջ 2

Համարեցրեց Կարա-Մուրզան

«ՋԱՆ ԳՅՈՒԼՈՒՄ»

Համարձման վիճակախաղ
Հայ ժողովրդի իրական կյանքից
Ֆեերիա 1 գործողությամբ

1. Անձեր

- | | |
|-------------------------------|------------------------------|
| 1. Քաղափոր— փոքր երեխա | Բաղդան (ենթադրաբար «Եսայան») |
| 2. Կառավարիչ— ծերունի | Ա. Վաչյանց |
| 3. Երգիչ— տենոր | Ղ. Արիստակեսյան |
| 4. Երգիչ— բարիտոն | Ք. Սոմխանյան |
| 5. Մաղկապան— կարճահասակ | Ա. Դավթյան |
| 6.— ա մրցող | Ա. Կրասիլնիկով |
| 7.— բ » | Արիստակեսյան |
| 8.— գ » | Ա. Արելյան |
| 9.— դ » | Ստ. Տեր-Մկրտչյան |
| — Տղայոց խումբ | Խումբը |
| 10. Քաղուհի— փոքր աղջիկ | Ամիրյան |
| 11. Կառավարչուհի— Տիկին | Ա. Եվանգուլյան |
| 12. Երգչուհի— սոպրանո | Օր. Հովհաննիսյան |
| 13. Երգչուհի— կոնտրալտո | Օր. Երամիշյան |
| 14. Վիճակաշահ Յրիորդ | Օր. Բունիաթյան |
| 15. «Քառասուն ակունք» | 1. Օր. Պապյան |
| 16. «Սասնոց աղբյուր» | 2. Օր. Տեր-Մարկոսյան |
| 17. յոթ օրիորդ «Հեռու ջրից» | 3. յոթն |
| 18. կժերով «Կաթն աղբյուր» | 4. աղջիկ-ներ |
| 19. «Բենչարիցն է» | 5. Օր. Հազարյան |
| 20. «Օխտն աղբորանց» | 6. Օր. Մարտիրոսյան |
| 21. «Բեղի աղբյուր» | 7. Օր. Շահնազարյան |

- 22. Կենտ պար պարող օրիորդ
- 23. Նույնպես
- 24. Նույնպես

- 1. Օր. Խաչատուրյան
- 2. Օր. Պապյան
- 3. Օր. Արտեմյան

- 25. Կենտ պար պարող տղա
- 26. Նույնպես
- 27. Վիճակ երգող օր. օր.

- 1. Պ. Սուլիսանյան
- 2. Պ. Արիստակեսյան

Վիրավորական օր. օր. Խաչատուրյան,
 Երամիշյան, Հովհաննիսյան,
 սիրախոսական օր. օր. Հովհաննիսյան,
 Շավերդյան,
 ճակատագրական օր. օր. Տեր-Մկրտչյան,
 Հովհաննիսյան, Խաչատուրյան, Երամիշյան,
 Շավերդյան և ուրիշներ

28. Վիճակ ընդունողները

Օր. օր. Աղամալյան, Երամիշյան, Հովհաննիսյան, Թարխանյան, Պապյան, Արտեմյան և այ. *

29. Վիճակ ընդունողներ

էջ 3

- 30. ա
- 31. բ
- 32. գ
- 33. դ
- 34. Քուրսի տանող
- 35. Խումբ կանանց
- 36. Պարող կանայք

Օր. Աղամալյան
 Օր. Արտեմյան

մրցող օրիորդներ

Օր. Լազարյան
 Օր. Սանամյան
 Օր. Սարգսյան

Խումբը
 Տ. տ. Ղուկասյան, Գյուզալյան,
 Յաղուբյան և այլն

37. 4 սինիներ և ամաններով մթերք տանող Օր. օր. 4

38. 4 գառան սկճոր և ուրիշ մթերքներ տանող տղայք 4

39. Սազանդարներ Կանանց խումբ

40. Դուդուկիներ Տղայոց խումբ

41. Օրկեստր Հնդհանուր խումբ

2. Իրեր

- 2 կոճղ ծածկոցներով
- 150 փունջ ծաղիկներ
- 1 սինի ծաղիկներով
- 2 սինի մթերքներով
- 1 կողով մրգերով
- 1 գառան խորոված
- 1 սկճոր գինի
- 1 կապոց վայրի թռչուններ
- 20 դաիր (ձեռքի)
- 1 վիճակաման
- 7 կուժ
- 2 քուրսի

* Դերակատարները նշված չեն:

3. Շորեր

Վանանց խումբ: Ախալցխայի, Շուշիի, Շամախու և Սասունցոց
Տղամարդկանց խումբ: Քաղթի շոր և շերքեզքա

էջ 4

4. Պարեր

$$\text{Վենտ} - \frac{\text{Ա. տ.}^1}{2} \frac{\text{Բ. տ.}}{2} \frac{\text{Ծ. տ.}}{1} \frac{\text{Չ. տ.}}{1} = 6$$

$$\text{Ալոր} - \frac{\text{Ա. տ.}}{1} \frac{\text{Բ. տ.}}{1} \frac{\text{Ք. տ.}}{1} \frac{\text{Շ. տ.}}{1} = 4$$

$$\text{Ուրախ} - \frac{\text{Ա. տ.}}{1} \frac{\text{Բ. տ.}}{1} \frac{\text{Գ. տ.}}{1} \frac{\text{Դ. տ.}}{1} \frac{\text{է. տ.}}{1} \frac{\text{Ը. տ.}}{1} \frac{\text{Շ. տ.}}{1} = 7$$

պար 17²

4. Խոսքեր

Կառավարչի

Կառավարչուհու

$$5. \text{Երգեր} = 7 + 7 + 7 + 7 = 28$$

Քնար Հայկականից — Սրախոսական

$\frac{7 \text{ տուն}}{\text{սազ}}$		Օր. Խաչատրյան — 53 պատասխան 91 — Տեր Մկրտչյան
		Օր. Երամիշյան — 100 պատասխան 94 — Արիստակեսյան*
		Օր. Հովհաննիսյան — 103 պատասխան 16 — Արիստակեսյան**
		Ծերուկ — 30 — Վալչանց ³

Սիրահարական

$\frac{7 \text{ տուն}}{\text{Օրկեստր}}$		Օր. Հովհաննիսյան — 14 պատասխան 5 — Արիստակեսյան
		Օր. Շահվերդյան — 38 պատասխան 48 — Սուլխանյան
		Օր. Հովհաննիսյան — 80 պատասխան 50 — Արիստակեսյան

«Մառիս տակը մանիշակ» երկու խումբ⁴

Յոթը կժերի

$\frac{7}{\text{սազ}}$		Օր. Պապյան	Տեր-Մարկոսյան	Տեր-Վարդանյան
		«Քառասուն ակունք»	«Սասնաց աղբյուր»	«Հեռու ջրից»
		Շահվերդյան	Լազարյան	Մարտիրոսյան
		«Կաթն աղբյուր»	«Բենջար»	«Օխտն աղբորանց»
		Շահնազարյան		
		«Բեխի աղբյուր» ⁵		

* Արիստակեսյան ազգանունը գրված է շեղված Արեւյան ազգանվան փոխարեն:

** Արիստակեսյան ազգանունը գրված է շեղված Կրասիլնիկյան ազգանվան փոխարեն:

Ճակատագրական վիճակներ

7
Օրկ.

Օր. Տեր-Մկրտչյան 24. Հովհաննիսյան 45. Խաչատրյան 20.
Երամիշյան 31. Շահվերդյան 58. Հովհաննիսյան «Ծաղիկ ունեմ»⁸
Նույնը երկու խումբ

Մրցական⁷

էջ 5	6. Երաժշտություն	
Ա. տեսարանին	4 պիես = 1. սազանդար. գնում են	
Բ. Տ.	II	1 դուդուկ տափզուրնա ⁸
Գ. Տ.	I	1 Սազանդար.
Դ. Տ.	II	1 տափզուրնա
Ե. Տ.	I	1 Սազանդար. մնում են
Զ. Տ.	II	1 տափզուրնա մնում են
» »	—	I+II=2 միասին
է. Տ. Ասիա	յոթը տուն «Ջան Գյուլ» լեզգիներ	Սազանդարներ
» »		Սազ. և տափզուրնա միասին.
Ը. Տ. Եվրոպա	յոթը տուն «Ջան Գյուլ» լեզգիներ	Կվարտետ և օրկեստր
		Օրկեստր
Ք. Տ.	Մեկոդրամա Յոթը տուն «Ջան Գյուլ» Կլոր պար	Կվարտետ
» » Ասիա		Սազանդարներ
» »		Սազանդար և տափզուրնա
Ժ. Տ.	Մեկոդրամա վիճակահանման	— Կվարտետ
» »	7 տուն «Ջան Գյուլ»	— Կվարտետ և օրկեստր
» »	Զիմ վզի վզնոց ⁹	— Սազանդար
» »	Հանկարծ լեզգիներ	— Օրկեստր
	Շարունակությունը	— Օրկեստր Սազանդար

- 1) Անտոն կայներ աղջիկ կուզե
2) Ելայ երթիկ¹⁰

և երգողներ¹¹

Երաժշտություն 14 անգամ¹²

էջ 6

7. Շարժում

Ա. Տեսարանին. Անցնում է—	կանանց խումբը
Բ. Տ.	» — տղամարդկանց
Գ. Տ.	» — Քաղուհին և կ(անանց) խ(ումբը)
Դ. Տ.	» — Քաղավոր և տ(ղամարդկանց) խ(ումբը)
Ե. Տ.	» — կ(անանց) խ(ումբը) մնում է
Զ. Տ.	» — տ(ղամարդկանց) խ(ումբը) մնում է

է. Տ. Մերուկը և քինտոքչիները գնում գալիս են
 Ը. Տ. Տիկինն և քինտոքչիք գնում գալիս են
 Ք. Տ. Վիճակբցում 7 կժերով վազում են
 Ժ. Տ. Վիճակ հանում և ընդունում են

8. Տևում է

17 պարերը 20 րոպե
 28 տուն երգը 15 րոպե
 Շարժում և խոսակցություն 15 րոպե
 Անսպասելի կորուստ 10 րոպե

Ընդամենը 60 րոպե

9. Նոտաներ գրվում է

Օրկեստրի համար — Ջան Գյուլ
 լեզգինկա
 մելոդրամա
 սիեեսա 3 հատ¹⁸

ԳԱՔ Քր. Կարա-Մուրզայի ֆոնդ թիվ 92

«ԱՆՀԱՅՏ ՄՅԵՆԱՐ»¹⁴

էջ 1

Տեսիլ 1¹⁵

Ձախից գնում են բեմ

Սազանդար, կենտ պարող, կառավարչուհին Քազուհոյ ձեռքից բռնած, հետո վիճակապան և աղջիկները: Սրանք բռնում են բեմի աջ կողմը:

Գուդուկչիներ մտնում ու բռնում ձախ անկյուն. սրանց հետևից կենտ պարող, հետո կառավարիչ և ձեռքից բռնած Քազավոր, հետո սինիավոր, հետո տղերք և մի քուրսիավոր. սրանք էլ բռնում են բեմի ձախ կողմը:

Ժանր պար | Մի տղա և մի աղջիկ, որ կենտ պարող են, սկսում են պարել միասին, որից հետո...* (ենթադրաբար պարիզավ) հրավիրում է օր. Խաչատրյանին¹⁶:

Կառավարիչ սինին դնել է տալիս մի քուրսիի վրա^{**}: Կառավարիչ պտըտում է.

Պատում է | Օր. Երամիշյան երգում է 100 տ Այ տղայ, շուն օտար լինիս¹⁷
 Վաշյանցը | Պ. Տեր-Մկրտչյան » 91 (?) «Ջան Գյուլում կասեմ՝ կշարեմ»

Պատում է | Օր. Հովհաննիսյան » 103 Գյուլում կասեմ
 Ծվանգուլյանը | Սուլխանյան (?) Մեր բաղումը մի դարան^{***}

* Մեկ բառ անընթեռնելի է:

** Այս նախադասությունից առաջ գրված է և շնչված է. «Մի տղա ձախից տանում է մի քուրսի, մի աղջիկ աչից մի ալլը»: Նույն նախադասության երկրորդ մասը նույնպես շնչված է. «... կառավարչուհին էլ մյուս քուրսիի վրա դնել է տալիս վիճակամանը»:

*** Սուլխանյան ազգանունը գրված է շնչված Պ. Արիստակեսյան ազգանվան փոխարեն: Ջնչված է նաև «Ջան Գյուլում»-ի քառյակի համարը՝ 97 (համաձայն «Քնար Հայկական»-ի, տե՛ս ծանոթություն 3), որի առաջին բառերն են «Մեր բաղումը մի դարան»:

Վաչյանց | ...* » Սանդ կ'ծեծեմ, խաղ կանեմ**

Պ. Վաչյանց » 30 Կանգնել ես ախտ¹⁸
 Լեզգիինկա
 Տուն եմ շինել զանանայ***

Վաչյանցից հետո խումբը երգում է «Ծառիս տակը», հետո տ. Գյուզալյանը դուրս է գալիս ու կենտ պար.

էջ 2

Ջաղացի դուռը տաշած
 Նախրատափին խնկի ծառ
 Աղջիկ՝ աղջիկ, ալ աղջիկ
 Այ տղա, դուն ալ կապավոր
 Ջաղացս ման եմ տուել****

Վիճակահանման | հումբը. «Ծառիս տակը»*****
 կենտ պար***** տ. Գյուզալյանի¹⁹
 Վիճակցություն, առաջ քցում են օրիորդները, հետո
 տղերքը, կառավարիչ քցում է վերջում:

Վաչյանցը՝ Բաս ուր է ձեր կժավորը. էսպես վիճակ քցել կլինի...*****
 ժամանակներում:

...**

1. գալիս է Տեր-Մարկոսյան օրիորդը, Սասոնց աղբյուր
2. Պապյան, Քառասուն ակունք
3. Սանամյան. Հեռու ջրից եմ գալ
4. Լազարյան. Լույս օրերը բեջարի
5. Շահվերդյան. Կաթնաղբյուրի ջուրը
6. Ղուկասյան. Աղբյուրս յոթ աղբերանց
7. Շահնազարյան. Պեխի աղբյուր²⁰

* Մեկ բառ անընթեռնելի է:

** Այս տողում ջնջված է հաշատրյան աղզանունը, ինչպես նաև քառյակի համարը՝ 57, (ըստ «Քնար Հայկական»-ի), որի առաջին բառերն են «Սանդ կ'ծեծեմ, խաղ կանեմ»:

*** Ջնջված են. նախորդ տողը, «Կառավարչուհին պտտում ես սինին», քառյակի ձախ կողմից նշված կատարողի աղզանունը և քառյակի համարը՝ «Օր. Հովհաննիսյան 14»:

**** Ջնջված են ձախ կողմից նշված կատարողների աղզանունները և քառյակներին համապատասխանող համարները, սակայն թյուրիմացաբար շեն ջնջվել համարադասիան երգերի վերնագրերը: Այսպիսով տետրի էջ 2-ի առաջին վեց տողերը պետք է հետևյալ տեսքը ունենային.

- Պ. Արիստակեսյան 5 Ջաղացիս դուռը տաշած
 Օր. Շահվերդյան 38 Նախրատափին խնկի ծառ
 Պ. Սուրխանյան 48 Աղջիկ, աղջիկ, ալ աղջիկ
 Օր. Հովհաննիսյան 80 Այ տղայ դուն ալ կապավոր
 Պ. Արիստակեսյան 50 Ջաղացս ման եմ տուել

Վերջին քառյակի խոսքերի անմիջապես ներքևում գրված և ջնջված է «(7 Օրիորդները գնում են աջ)»:

***** «հումբը» նշված է ջնջված Ծվանգուլյան աղզանվան փոխարեն:

***** «Կենտ պարը» նշված է ջնջված «Լեզգիինկայի» փոխարեն:

***** Մեկ բառ անընթեռնելի է: Այս տողի անմիջապես ներքևում գրված և ջնջված է «Յոթ կժերավորները մտնում են»:

***** Մեկ բառ անընթեռնելի է:

....* Կառավարչուհին այդ յոթ օրիորդների հետ վիճակ քցելուց հետո բռնում են կլոր պար:

3 էջ

Սրանից հետո կառավարիչ ու կառավարչուհին բացում են կոճղերը և թագավոր թագուհուն նստեցնում վրաներին, սրանց առաջը դնում են քուրսին և սկսվում է վիճակահանությունը.

1. Երգում է օր. Տեր-Մարկոսյան 24 Կանգնել ես կանչում
Օր. Աղամալյան և պ. Ալեքսանյանի համար. հաշտ.
2. Երգում է օր. Հովհաննիսյան 45 Մեր դռան առաջին
Օր. Յարամիշյան և պ. Շահնազարյանի համար. անբավական
3. Երգում է օր. Խաչատրյան 20 Մի ջաղաց երկու դռնի
Օր. Հովհաննիսյան և պ. Բաբիկին համար. հաշտ
4. Երգում է Յարամիշյան 31 Երդիկ երդիկ բռնել են.
Օր. Թարխանյան և պ. Ղասաբյանի համար ոչ հաշտ
5. Երգում է օր. Շահվերդյան 58 Ծրագ դնեմ լիսացու
Օր. Պապյան Պ. Շահնազարյան 2-ի համար. հաշտ
6. Երգում է օր. Հովհաննիսյան «Մաղիկ ունիմ տղայ այ»
Օր. Արտեմյան և Պ. Ղազարյանի համար (ենթադրաբար՝ հաշտ).²¹
Սկսվում է քշուփը և ծաղկախաղ²²:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Ա. տ., Բ. տ. և այլն համապատասխանաբար նշանակում են՝ Ա տեսարան, Բ տեսարան և այլն: Գծերի տակ թվերը ցույց են տալիս տվյալ բնույթի պարի (ուրախ, կլոր կամ կենտ) քանակը տվյալ տեսարանում:

² Ֆեերիայի Ա տեսարանում կատարվում է երկու կենտ, մեկ ուրախ և մեկ կլոր պար, Դ տեսարանում՝ եռուկան: Ե և Զ տեսարաններում մեկական կենտ պար, է և Ը տեսարաններում՝ մեկական ուրախ պար, Թ տեսարանում՝ մեկ կլոր պար, Ժ տեսարանում՝ մեկ կլոր և մեկ ուրախ պար: «Նախագծի» առաջին էջում զետեղված ցուցակում համապատասխանաբար նշված է՝ «Պարեր 17 անգամ»: Համաձայն «4. Պարեր» կետի, պարերը 12 անգամ կատարվում են Ա-ից Զ 6 տեսակ

տեսարաններում: Բացի «ուրախ», «կենտ» և «կլոր» ընդհանուր ցուցումներից, այդ 12 պարի մասին ավելի մանրամասն տեղեկություններ չկան: Մնացած 5 անգամը կատարվում են է-ից Ժ տեսարաններում: «4. Պարեր» և «6. Երաժշտություն» կետերում արված նշումների համեմատությունը ցույց է տալիս, որ է, Ը և Ժ տեսարաններում կատարվում է «լեզգիկան», Թ տեսարանում՝ «կլոր պար», Ժ տեսարանում՝ «Զիմ վզի վզնոց» պարերգը: 4-րդ կետում է, Թ և Ժ տեսարանների «ուրախ պարին» այսպիսով 6-րդ կետում համապատասխանում է «լեզգիկան», «կլոր պարին»՝ մեկ անգամ «կլոր պար» (Թ տեսարան) և մեկ անգամ՝ «Զիմ վզի վզնոց» պարերգը (Ժ տեսարան): Սրանք նշված 6 տեսակ պարերից երեքն են («լեզգիկան», «կլոր պար», «Զիմ վզի վզնոց»): Մյուս երեքի անվանումները չկան:

³ Ազգանունների դիմաց նշված թվերը համապատասխանում են «Քնար Հայկական» երգերի ժողովածուի (խմբ. Մ. Միսնասրյանցի, Ս-Պետերբուրգ, 1868 թ.) Գլուխ Գ՝ «Հասարակաց (ուսմական)» երգեր» բաժնում զետեղված «Ջան Գյուլում, ջան ժաղիկ» Համարածման տոնի վիճակախաղի ժամանակ երգվող քառյակների (էջ 158—166) համարակալմանը: Կարա-Մուրզան դասավորել է քառյակները հարց ու պատասխանի ձևով. աղչիկը երգում է հարցը, տղան՝ պատասխանը: Օրինակ՝
«Օր. Խաչատրյան 53» (հարց).

Սանդ կ'ծնծեմ, խաղ կանեմ, ջան գյուլում, ջան, ջան,
Մաշիկը ոտիս լախ կանեմ, ջան գյուլում, ջան, ջան».

* Մեկ բառ անընթեռնելի է:

Այ տղայ, դու շատ մի խոսակ, «ջան գլուցում, ջան, ջան»,
Մուկն ըռեխիցդ կախ կանեմ, «ջան գլուցում, ջան, ջան»:

«Տեր-Մկրտչյան 91» (պատասխան)։

«Ջան գլուցում կասեմ՝ կշարեմ, «ջան գլուցում, ջան, ջան»,
Տոպրակը կածեմ՝ կու կարեմ, «ջան գլուցում, ջան, ջան»,
Կտրէ կտուր ման կուգամ, «ջան գլուցում, ջան, ջան»,
Քանց թեզ լավը կճարեմ «ջան գլուցում, ջան, ջան»:

⁴ «Մառիս տակը մանիշակ» «Քնար Հայկական» ժողովածուի մեջ զետեղված քառյակներից առաջինն է: Այս քառյակը, իրեն համապատասխան մեղեդիով հանդերձ, մշակված է Քր. Կարա-Մուրզայի կողմից որպես խմբերգ՝ «Ջան Գլուցում» անվանման տակ: Ինչպես հետևում է «երկու խումբ» նշումից ֆեներիայում այդ խմբերգն էր կատարվում: «Մառիս տակը մանիշակ» քառյակի կատարումը, այսպիսով, տարբերվում է մյուս «Ջան Գլուցում» քառյակների կատարումից: Կիրջիներն նախատեսված են մենակատարի համար՝ սազանդարների կամ օրկեստրի ուղեկցությամբ: Ըստ երևույթին, բոլոր «Ջան Գլուցում»-ները ֆեներիայում կատարվել են նույն մեղեդիով: Այդ դեպքում կարելի է ենթադրել, որ Կարա-Մուրզան մտադրվել է ցուլց տալ ժողովրդական մեղեդու կատարման մի քանի տարբերակներ (դրա մասին տե՛ս նաև ծանոթություն 11):

⁵ Ի տարբերություն նախորդ «Ջան Գլուցում» քառյակների, «Յոթը կժերի» բաժնում նըշված երգերը «Քնար Հայկական»-ում զետեղված քառյակների թվին չեն պատկանում:

⁶ «Ճակատագրական վիճակների» բաժնում, թերթի ձախ կողմում նշված «7» քառյակներից կատարվում են վեցը, և վերջինը կրկնվում է:

«Մաղիկ ունեմ» քառյակի համարը նշված չէ: Հավանաբար այն «Քնար Հայկական»-ում զետեղված «Ջան Գլուցում» քառյակներից № 18-ն է՝ «Մաղիկ ունիմ տղայ ա...» (քանի որ, «Մաղիկ ունիմ» քառերով սկսվող ուրիշ քառյակներ չկան):

«Մաղիկ ունիմ» քառյակը, համաձայն «Հովհաննիսյան՝ «Մաղիկ ունիմ» — նույնը՝ երկու անգամ» ցուցման, ըստ երևույթին, մշակված էր մենակատարի և երգչախմբի համար՝ նվագախմբի և լարային քառյակի նվագակցությամբ:

⁷ Կոնկրետ երգ նշված չէ:

⁸ «Տափազուրնա»՝ հավանաբար «ղափզուռնա»:

⁹ «Ջիմ վզի վզնոց» պարերգը Քր. Կարա-Մուրզան մշակել է որպես խմբերգ: Ինչպես հայտնի է դառնում Կարա-Մուրզայի կազմակերպած համերգների ծրագրերից (ԳԱԹ, Քր. Կարա-Մուրզայի ֆ. թիվ 196), այն կատարվել է նաև որպես առանձին համար, որին մասնակցել են երգչախումբը, ինչպես նաև 12 պարողները, որոնք կատարել են կտր պար: Ֆեներիայում այս պարերգը կատարվում էր սազանդարների ուղեկցությամբ: «Նախագծում» արված ցուցումներից պարզ չէ, արդյո՞ք դրա կատարմանը պետք է մասնակցեր նաև երգչախումբը:

¹⁰ «Անտոն կայնիր աղբիկ կուգե» և «Սեյալ երթիկ» երգերի անվանումները նշված են մատիտով: Ըստ նշման դիրքի, մյուս ցուցումների նկատմամբ, դժվար է որոշել, թե արդյոք նրանք վերաբերում են վերջին տեսարանին, և եթև այդպես է, ապա կասված են արդյոք «Շարունակությունը» ցուցման հետ:

¹¹ Հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ֆեներիայում մասնակցում են մի կողմից սազանդարների և դուդուկիչիների խմբեր, մյուս կողմից՝ եվրոպական նվագախումբը և լարային քառյակը: Է, Ը, Թ, Ժ տեսարաններում «Ասիա» և «Ծովուրպա» նշումները ակնհայտորեն ցուլց են տալիս, որ Կարա-Մուրզան խնդիր էր դրել հակադրել արևելյան և եվրոպական նվագախմբերի ուղեկցությամբ կատարվող տեսարանները (է տեսարանը՝ արևելյան խումբ, Ը տեսարանը՝ եվրոպական նվագախումբ, Թ տեսարանը՝ նորից արևելյան): Նույնը կարելի է ասել և այդ տեսարանները կազմող առանձին երաժշտական համարների մասին: Այսպես, «Ջան Գլուցում» քառյակների կատարմանը է և Թ տեսարաններում մասնակցում է արևելյան նվագախումբը, իսկ Ը տեսարանում եվրոպական: «Եղգինկան» է տեսարանում կատարում է դուդուկիչների և սազանդարների խումբը, իսկ Ը և Ժ տեսարաններում եվրոպական նվագախումբը: Այսպիսով ցուցադրված են միևնույն մեղեդիները և մշակված, և «քանկան» ձևով (քանի որ սազանդարների կատարումը նշված հատվածները հազիվ թե առանձնախ մշակման ենթարկված լինեին): Ժ տեսարանի վերջում արևելյան և եվրոպական խմբերը միանում են:

¹² «Ծրածառություն 14 անգամ» կատացվի այն դեպքում, եթե Ա—Ջ տեսարաններում կատարվող երաժշտական հատվածները ընդհանուր առմամբ ընդունվին որպես միայն երկու անգամ կատարված (1 սազանդար, 11 դափազուռնա), անկախ առանձին հատվածների քանակից, քանի որ մնացած է-ից Ժ տեսարաններում կատարվում է ընդամենը 12 համար:

«Նախագծի» առաջին էջում զետեղված ցուցակում նշված է «Ծրածառությունը 14 անգամ / 9 տեսակ պինս»

«6 Երաժշտութիւն», կետում Ա—Ջ տեսարանների համար նշված են շորս պիես: «4. Պարեր» և «6. Երաժշտութիւն» կետերի համադրութիւնից կարելի է եզրակացնել, որ այդ շորս պիեսներից յուրաքանչյուրը՝ երկու կենտ, մեկ ուրախ և մեկ կտոր պարերը, կատարվում է մի քանի անգամ (համեմատ. ծանոթութիւն 2):

9 կետում, որտեղ նշված են նվագախմբի համար նախատեսված պիեսները, հիշատակվում է երեք պիես. «Ջան Գյուլ»-ը, «Լեզգիկա»-ն և «Միլոդրամա»-ն, 6-րդ կետում հիշատակվող այս պիեսները, անկախ նշված քանակից, պետք է հաշվել որպես մեկ, և այդ դեպքում նրանք Ա—Ջ տեսարանների 4 պիեսների հետ միասին կհաղմեն 7 պիես: Ինը պիեսը բոլորելու համար մնում են երկուսը, և դրանք են «Կտոր պարը» և «Ջիմ վրի վզնոց» պարերը:

15 Համադրելով «Նախագծի» 1-ին, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ կետերը՝ կարելի է ստանալ ֆեներիայի երաժշտական ձևավորման և բեմական գործողութիւնի հետևյալ պատկերը.

Ա տեսարան. կանանց խումբը և սաղանդարները անցնում են բեմով, կատարում երկու կենտ, մեկ կտոր և մեկ ուրախ պար ու հեռանում:

Բ տեսարան. տղամարդկանց, դուդուկիների և զուռնաչիների խմբերը անցնում են բեմով, կատարում երկու կենտ, մեկ ուրախ և մեկ կտոր պար ու հեռանում:

Գ տեսարան. նորից դուրս է գալիս կանանց խումբը (բերելով բեմ Թագուհուն) սաղանդարների ուղեկցութեամբ և, կատարելով մեկ ուրախ պար, հեռանում ("):

Դ տեսարան. նորից դուրս է գալիս տղամարդկանց խումբը (բերելով բեմ Թագավորին) դուդուկիների և զուռնաչիների ուղեկցութեամբ և, կատարելով մեկ ուրախ պար, հեռանում ("):

Ե տեսարան. կանանց և սաղանդարների խմբերը մտնում են բեմ և մնում: Կատարվում է մեկ կենտ պար:

Ղ տեսարան. տղամարդկանց, դուդուկիների և զուռնաչիների խմբերը մտնում են բեմ և մնում: Կատարվում է մեկ կենտ պար: Ջ տեսարանի վերջում կանանց և տղամարդկանց խմբերը միանում են:

Այսպիսով, Ա-ից Ջ տեսարանները գուտ պարային են:

Հերթական է, Ը, Ք, Ժ տեսարաններում կատարվում է վիճակախաղի ժեսը: Յուրաքանչյուր տեսարանում կատարվում է յոթական «Ջան Գյուլում» և ավարտին՝ մեկ պար:

Է տեսարան. կատարվում են «սրախոսական» քառյակներ՝ հարց ու պատասխանի ձևով, և «Լեզգիկա»՝ սաղանդարների և զուռնաչիների մասնակցութեամբ:

Ը տեսարան. կատարվում են «սիրահարական» քառյակներ՝ նույնպես հարց ու պատասխանի ձևով, և «Լեզգիկա»: Այս անգամ նվագակցում են եվրոպական նվագախումբը և լարային քառյակը:

Թ տեսարանը սկսվում է միլոդրամայով՝ «վիճակցում»՝ լարային քառյակի ուղեկցութեամբ: Գուրս ևն գալիս յոթ կժերով աղջիկները և կատարում «Յոթ կժերի» երգերը: Վերջում՝ «Կտոր պար»: Երգերը կատարվում են սաղանդարների, իսկ «Կտոր պարը»՝ սաղանդարների և զուռնաչիների նվագակցութեամբ:

Ժ տեսարան. Միլոդրամա՝ «Վիճակհանում» լարային քառյակի ուղեկցութեամբ: Այնուհետև կատարվում են «Ծակատագրական» քառյակները նվագախմբի և լարային քառյակի նվագակցութեամբ:

Ժ տեսարանի վերջին մասը մասսայական է և եզրափակում է ֆեներին: Այն սկսվում է «Ջիմ վրի վզնոց» պարերով՝ սաղանդարների նվագակցութեամբ: Պարերը ընդհատվում է լեզգիկայով՝ նվագախմբի ուղեկցութեամբ: Այնուհետև նշված է «Շարունակութիւնը», որը կատարում են նվագախումբը, սաղանդարները և երգողները՝ այսինքն՝ բոլոր մասնակիցները: Պարը չէ, սակայն, թե Կարա-Մուրզան արդյոք ի նկատի ունի «Ջիմ վրի վզնոց» պարերի շարունակութիւնը, լեզգիկայի շարունակութիւնը, թե ողջ տեսարանի շարունակութիւնը:

14 Ինչպես նշել ենք նախաբանում, «Անհայտ սցենարը» «Ջան Գյուլում» ֆեներիայի սցենարն է: Իր ընդհանուր նկարագրով համընկնելով ֆեներիայի այն պատկերի հետ, որը «Նախագծի» վերլուծութիւնի հիման վրա է ստացվում, «Սցենարը» մի շարք մանրամասներով տարբերակվում է նրանից: Մենք ենթադրում ենք, որ «Սցենարը» գրված է «Նախագծից» ավելի վաղ և կազմում է Կարա-Մուրզայի մտահղացման առաջին տարբերակը:

15 Հետագայում տեսարանները նշված չեն:

16 Սցենարի սկզբնական ամբողջ հատվածը «Նախագծի» վերլուծութիւնի հիման վրա ստացված ֆեներիայի սցենարի պատկերի հետ (տե՛ս ծանոթութիւն 13) համեմատելիս պարզվում է, որ այստեղ պակասում են Ա, Բ, Գ, Դ տեսարանները: Գործողութիւնը սկսվում է անմիջապէս Ծ տեսարանից:

Ա-ից Ջ տեսարաններում «Նախագծում» հիշատակված 12 պարից այստեղ նշված է միայն մեկը՝ «Ժանր պար», որը կատարում են երկու զույգ:

17 Համարների դիմաց նշված են համապատասխան «Ջան Գյուլում» քառյակների սկզբնական բառերը:

¹⁸ «Սցենարում» «Ջան Գյուլում»-ների առաջին շարքը տարբերվում է «Նախագծի» «5 երգեր» կետում բերված շարքից:

¹⁹ «Սցենարի» առաջին էջի վերջում և այստեղ արված նշումները համընկնում են: Ըստ երևույթին այդ նշումներից մեկը պետք է կրճատվեր: Եվ քանի որ «Ջան Գյուլում»-ների երկրորդ շարքը ամբողջությամբ սղվել է, ապա «Մառիս տակը մանիշակ»-ի և «Կենտ պար»-ի կատարումը ենթադրվել է սոսկ մեկ անգամ՝ երգերի առաջին շարքից հետո:

²⁰ Այստեղ և «Նախագծում» նշված «Յոթ կժերի» երգերի անվանումները համընկնում են: Փոփոխված են միայն I—II, IV—V երգերի տեղերը: Մասամբ տարբերվում է կատարողների կազմը: «Սցենարում» օր. Տեր-Վարդանյանի փոխարեն նշված է Սանամյանը, Մարտիրոսյանի փոխարեն՝ Ղուկասյանը:

²¹ «Ճակատագրական» «Ջան Գյուլում»-ների շարքը «Սցենարում» և «Նախագծում» համընկնում է: «Սցենարից» պարզ է դառնում, որ քառյակների կատարման ընթացքում պետք է վիճակներ հանելին զույգերի համար: «Հաշտ», «Տշ հաշտ» բառերը կարող են վերաբերվել կամ քառյակի բովանդակությանը, որը զուշակում է զույգերի հետագա հարաբերությունները, կամ էլ զույգերի արձագանքին՝ քառյակի բովանդակության նկատմամբ:

²² Այստեղ «Սցենարը» ընդհատվում է:

Н. Г. САРГСЯН—Феерия «Джан-Гюлум» Хр. Кара-Мурзы.—

Х. Кара-Мурза является одним из представителей армянской культуры, осуществивших в конце XIX—начале XX в. сценическую обработку свода армянских национальных праздников и обрядов. Обработка содержится в двух хранящихся в Музее литературы и искусства в фонде Х. Кара-Мурзы в 2-х тетрадях. В первой (№ 495) композитор изложил «проект феерии «Джан-Гюлум»—гадание на праздник Вознесения из реальной жизни. Вторая тетрадь содержит список действующих лиц и исполнителей, перечень реквизита для постановки и костюмов, а также названия песен и музыкальных произведений и другие указания по поводу сценического действия.

Ниже приводится полный текст обеих тетрадей. В комментариях делается попытка восстановления картины действия феерии анализируются особенности ее музыкального и сценического воплощения.